

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐ ՆՎԻՐՎԱԾ Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԾՆՆԻՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

ՀՄԽԻ ԳԱ լեզվի ինստիտուտի հերթական գիտական նստաշրջանը նվիրված էր Վ. Ի. Լենինի ծնդյան 100-ամյակին: Նստաշրջանում բովանդակալից զեկուցումներով հանդես եկան անվանի գիտնականներ, լեզվաբաններ:

«Լեզվի մարքս-լենինյան ըմբռնումը» թեմայով զեկուցման մեջ պրոֆ. Գ. Սևակը ընդգծեց մարքսիզմի մեծ դերը լեզվի էություն ճիշտ ըմբռնման գործում և հանգամանորեն վերլուծեց մարքս-լենինյան տեսությունը լեզվի մասին՝ հատկապես կանգ առնելով լեզվի ձևի և բովանդակության, լեզվի և մտածողության, լեզվի և հասարակական գիտակցության փոխհարաբերությունների հարցերի վրա:

«Լենինյան ազգային քաղաքականությունը և հայ ազգային լեզվի զարգացումը» թեմայով զեկուցում կարդաց բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Արրահամյանը: Ազգային հարցը, նշեց զեկուցողը, պրոլետարիատի դիկտատուրայի հաղթանակի և սոցիալիզմի կառուցման վերաբերյալ մարքս-լենինյան ուսմունքի էական հարցերից մեկն է, հարց, որը Լենինի կողմից ստացավ միակ ճիշտ, արդարացի և գիտական լուծումը: Մանրամասն վերլուծելով լենինյան ազգային քաղաքականությունը, զեկուցողը նշեց այն մեծ դերը, որ խաղաց այդ քաղաքականությունը Սովետական Միության ժողովուրդների ազգային ինքնորոշման, մշակույթի, ինչպես նաև լեզվի զարգացման գործում: Այնուհետև խոսքը մասնավորելով հայ ժողովրդի և հայ ազգային լեզվի շուրջը, զեկուցողը ցույց տվեց, որ միայն Հոկտեմբերյան հեղափոխության և մասնավորապես լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ էր, որ հայերենը բարձրացավ պետական լեզվի աստիճանին և ստացավ զարգացման մեծ հնարավորություններ:

«Լենինը և բառարանագրական կուտուրան» թեմային էր նվիրված բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Գասպարյանի զեկուցումը: Իր հոգվածներում, նամակներում, ելույթներում Վ. Ի. Լենինը բազմիցս անդրադարձել է բառարանների և բառարանագրության հարցերին՝ ցույց տալով այն մեծ դերը, որ դրանք ունեն հատկապես օտար լեզուներ սովորելու, ինչպես նաև տվյալ լեզվի բառապաշարը մշակելու ու նորմավորելու գործում: Այնուհետև զեկուցողը մանրամասն խոսեց այն մասին, որ Լենինը նաև անձնական օրինակով ցույց է տվել, թե ինչպես պետք է կազմել բառահոգվածներ: Քաղաքական, փիլիսոփայական, տնտեսագիտական շուրջ 500 տերմինների՝ նրա տրված բացատրությունները հետագայում գրեթե անփոփոխ տեղ են գտել բառարաններում: 1920 թ. Լուսաչարուկուն և Պոկրովսկուն գրած նամակներում Վ. Ի. Լենինը գծել է այն ուղիները, որոնցով պետք է զարգանար և իրոք զարգացավ սովետական բառարանագրությունը:

* * *

1970 թ. փետրվարի 11-ին Կիրովականում տեղի ունեցավ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի, ՀԿԿ Կիրովականի քաղկոմի և հանրապետական «Գիտելիք» ընկերության համատեղ նստաշրջանը նվիրված՝ Վ. Ի. Լենինի հոբելյանին: Նստաշրջանում լսվեցին փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Ասլանյանի «Լենինիզմը և ժամանակակից գաղափարական պայքարը», փիլիսոփայական գիտությունների թեկնածու Մ. Անտոնյանի «Վ. Ի. Լենինը և արդի հեղափոխական պրոցեսի դիալեկտիկան», փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Վ. Սևյանի «Պայքարը հայ իրականության մեջ լե-

նինյան փրկիսփայլական գաղափարների հաղթանակի համար» և Կիրովականի բաղկումի պրոպագանդայի բաժնի վարիչ Հ. Գևորգյանի «Լենինյան պատգամների կենսագործումը Կիրովականում» ղեկուցումները:

Նստաշրջանի օրերին տեղի ունեցավ գիտնականների և Կիրովականի «Ավտոմատիկա» գիտահետազոտական ինստիտուտի կոլեկտիվի հանդիպում:

Փետրվարի 24-ին ինստիտուտի Փրկանում կազմակերպած գիտական նստաշրջանում հանդես եկավ պրոֆեսոր-դոկտոր Հ. Ասլանյանը, լավեցին փրկիսփայլական գիտությունների դոկտոր է. Մարգարյանի Ե. Ի. Լենինը և սոցիոլոգիական տեսության մի քանի հարցեր», փրկիսփայլական գիտությունների թեկնածուներ Ս. Ավետիսյանի ու Գ. Գրիգորյանի՝ «Շարժման դիալեկտիկական և ձևական տրամաբանությունը» ու Ե. Ի. Լենինը և փրկիսփայլության պատմության ուսումնասիրության մեթոդոլոգիական մի քանի հարցեր» ղեկուցումները:

* * *

Արվեստի ինստիտուտը և ՀԿԿ Երևանի սպանդարյանի շրջանային կոմիտեին կազմակերպեցին համատեղ գիտատեսական կոնֆերանս՝ նվիրված Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին:

Արվեստի ինստիտուտի դիրեկտոր պրոֆ. Ռուբեն Զարյանի բացման խոսքից հետո, փրկիսփայլական գիտությունների դոկտոր Յա. Խաչիկյանը շեկուցեց «Վ. Ի. Լենինը և արվեստի իրազեկանությունը պրոբլեմը» թեմայով: Ընդգծելով Վ. Ի. Լենինի վիթսարի դերը ընդհանրապես մարքսիզմի նամակողմանի զարգացման մեջ, նա Իանրամասն կանգ առավ հատկապես արվեստի կուսակցականության լենինյան հարցադրման վրա: Բնութագրելով արվեստի կուսակցականության լենինյան ըմբռնումը, ղեկուցողը ցույց տվեց

արվեստի կուսակցականության հասկացության ձևավորման և զարգացման հիմնական փուլերը:

Արվեստագիտության թեկնածու Մ. Տեր-Սիմոնյանի ղեկուցումը նվիրված էր «Լենինը և երաժշտությունը» թեմային: Խոսելով Վ. Ի. Լենինի դեպի երաժշտությունը ընդհանրապես և դեպի դասական երաժշտությունը մասնավորապես ունեցած մեծ սիրո մասին, ղեկուցողը նշեց նաև, որ Լենինին մշտապես զբաղեցրել են նոր սոցիալիստական դարաշրջանում ծնված արվեստի հարցերը:

Արվեստաբանության թեկնածու Լ. Խալաթյանը անդրադարձավ Վ. Ի. Լենինի թատրոնի նկատմամբ ունեցած վերաբերմունքին: Նա ասաց, որ Վ. Ի. Լենինը թատրոնը համարում էր գեղարվեստական ստեղծագործության հզոր միջոց: Զեկուցողը, հրապարակեց և վերլուծեց թատրոնի վերաբերյալ Լենինյան դեկրետը: Նա ցույց տվեց առաջնորդի հոգատարությունը՝ հնագույն օջախների՝ Մոսկվայի Մեծ և Փոքր թատրոնների, Մոսկվայի գեղարվեստական թատրոնի, ռուսական բեմի մեծ վարպետների նկատմամբ:

Գիտատեսական կոնֆերանսի վերջին թեման Մ. Ղաղարյանի «Լենինյան մոտեմենտալ պրոպագանդան և նրա հայկական արձագանքներն» էր: Արվեստագիտության թեկնածու Մ. Ղաղարյանը նշեց, որ մոտեմենտալ պրոպագանդայի լենինյան ծրագիրը խոշոր դեր խաղաց սովետական արվեստի հիմնավորման և զարգացման գործում:

Գիտատեսական կոնֆերանսի արդյունքներն ամփոփեց ՀԿԿ Սպանդարյանի շրջանային կոմիտեի քարտուղար ընկ. Մ. Քոչարյանը: Նա շնորհակալություն հայտնեց գիտաշխատողներին իրենց հետաքրքիր և ուսանելի ղեկուցումների համար և մաղթեց անխոնջ եռանդ գիտական աշխատանքում: